

Գ. ԿԱՐԱ - ԴԱՐԻԻՇ

Թիֆլիսում, Դեկտեմբեր 16ին յանկարծամահ եղաւ հայկական ֆուտուրիզմի գրօշակակիր Կարա-Դարւիշը:

Իր աշխարհայեացքով, իր գրելու ձեւով, իր ստեղծագործութիւններով մինչեւ վերջն էլ հաւատարիմ մնաց իր սիրած գրօշին:

Չնայած սակայն դրան, նրան ոգեւորում էր Հայաստանի նոր կեանքը, նոր կուլտուրան: Առանձին հրճուանքով գիտում էր նա նոր շինարարութիւնը, նոր արուեստը եւ ոգեւորուած պատմում, խօսում, գրում: «Պրոլետար»ում նրա տպուած

յօդուածները՝ Խորհ. Հայաստանի նոր շինարարութեան եւ արուեստի ցայտուն պատկերներն են, որոնք ցոյց են տալիս նրա անկեղծ ոգեւորութիւնը:

Վրաստանի կառավարութիւնը նրան տալիս էր թոշակ: Գրում էր եւ յօդուածներ եւ այդպիսով պահպանում իր գոյութիւնը:

Նրա թողած գրական ժառանգութիւնը պատկանում է անցեալին: Իբրեւ այդպիսին էլ նա գրաւելու է իր տեղը հայ գրականութեան մէջ:

Թիֆլիս

Ա. ԵՐ.

ԼՐԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻՑ

ԹԱՏՐՈՆ

Հայ բասրոնի ֆննադասական պատմութիւնը.— Բանասէր-գրականագէտ Արամ Երեմեանը պատրաստել է խիստ հետաքրքիր մի ուսումնասիրութիւն Հայ բասրոնի ֆննադասական պատմութիւնը խորապրով, որ ընդգրկում է սկզբից մինչեւ ութսունական թուականների թատրոնի պատմութիւնը (Ա. հատոր): Այդ պատճառով զայիս է լրացնելու նախ՝ հայ թատրոնի պատմութեան բացը, երկրորդ՝ տալիս է մեզ հայ թատրոնի աստիճանական զարգացման ֆննադասական ամփոփ պատմութիւնը, ուղղելով Ա. օր, Պոօշեանի, Փափաղեանի, Մանուէրեանի եւ այլ գրողների սխալ եզրակացութիւնները եւ հակասութիւնները: Այն կարծիքը թէ ուստի հայ թատրոնը սկիզբ է առել Մասիսում 1858 կամ 1859 թուին, եւ որն իշխում է մինչեւ օրս հայ թատերական գրականութեան պատմութեան մէջ, հերքում է: Այս փաս-

տացի տուեալներով պարզաբանում է 30ական թուականների թատրոնական այն շարժումը, որ մինչեւ օրս չի լուսաբանուած:

«Հայ թատրոնի պատմութիւն»ը սկսում է հայ թատրոնի ծագման շրջանից: Այս լուսաբանում են թատրոնական բոլոր այն շարժումները, որոնք տեղի են ունեցել 5րդ, 7րդ, 11րդ, 17րդ եւ 19րդ դարաշրջաններում: Առանձին տեղ են զբաղում 19րդ դարի 30ական, 40ական, 50ական, 60ական եւ 70ական թուականների հայ թատրոնի պատմաշրջանները: Այդ բոլորը կազմում են Հայ բասրոնի պատմութեան Ա. մասը: Երկրորդ հատորն ընդգրկելու է իր մէջ 80ական թուականներից մինչեւ մեր օրերը:

Երեւանի Պետրասրոնը.— Առաջին Պետրասրոնը (Երեւանի) յայտարարել է իրեն հարուստ լինել: Կազմուած է հանդիպական արգֆիկալան, որով այս թատերաշրջանում պիտի բեմադրուի 192 ներկայացում անցեալ թատերաշրջանի 142 ներկայաց-

ման դիմաց: Թատրոնը ճրջութեան է դուրս եկել Երկրորդ Պետթատրոնի (Լենինականի) հետ:

Վահրամ Փափազեանի գաւսօլները.— Դեկտեմբերի երկրորդ կիսուն վաստակաւոր դերասան Վահրամ Փափազեանը Երեւանի Պետթատրոնի խմբի հետ աւենակալ է երկու գաստրօլային ելոյթ «Օթէլլօ» պիէսում:

«Սեւ զեմքեր».— Երեւանի Պետթատրոնը պատրաստում է 1905 թ. յերասփութեան յոբելեանի առթիւ «Սեւ Գնացք» պիէսը, որը տալիս է 1905 թ. ապստամբական շարժումներից եւ գաղտնի աշխատողներից: Բեմադրում է Տ. Շամիրխանեանը:

Նոր շէնքում.— Երեւանի Պետթատրոնն իր շէնքի փոքրութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով լայն կերպով սպասարկելու դիտող մասսային, աշխատանքներ է կատարում մի շարք ներկայացումներ կազմակերպելու Կառուցողների Նորակառոյց ակմբում: Եթէ այս հարցը կարգաւորուի, թատրոնն սպասարկելու է 160,000 դիտողի:

«Յաղթանակի համբին».— Թիֆլիսի Պետական Հայ Դրամատիքական Խումբը, նախկին Ժողովրդական Տանը, Մարջանիչվելու դեկավարութեամբ, սէզօնի բացման առթիւ ներկայացնում է Յովհաննէս Պօղոսեանի «Յաղթանակի Ճամբին» պիէսը: Մասնակցում են՝ Ալիխանեան Իս. (Ժողովրդ. դերասան), Աբարեան, Արամ-Խոսրով, Աշուղեան, Բերօյեան, Գալստեան, Իփախեան, Լուսինեան, Մոճոռեան, Մարի-Բերօյեան եւ ուրիշներ:

Կ Ի Ն Օ

Աւարտում նկարներ.— Մինչեւ Յունուարի առաջին կէսին աւարտելու են եւ ցուցադրուելու՝ «Անուշը», «Տուրխատական Հայաստանը», «Ձորերում եւ կիրճերում», «Կոսպերացիա»: Աւարտում է Մ. Գարբինեանի «Կիկոս»ի լուսանկարումը, որը կը ցուցադրուի Հայկինոյի թատրոններում:

1931 բուլի պլանը.— Կազմուած պլանի համաձայն, 1931 թ. բնթացքում նկարահանուելու են վեց գեղարուեստական լրիւ ձեւարձով նկարներ,— «Հին Ատուածների կործանումը», «Հարցրէք նրանց», «Մրցումը դաշտերում», «Գործարույր Սէն-Լուիում», «Փրոնտում» եւ «Ապստամբութիւն»:

Նոր ռեժիսորներ եւ օպերատորներ.— 1931 թուի բնթացքում, Մոսկուայից Սայուզկինոյի ճիշտով հրաւիրուելու են հայ-կինոյում աշխատելու

երեք ռեժիսոր եւ երկու օպերատոր, որոնց գալուց յետոյ, հայ-կինոյում աշխատելու են նկարահանման տասը խմբեր:

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կոմիտասի ծննդեան 60ամեակը.— Երեւանում, Դեկտեմբեր 29ին, Կուլտուրայի Տան զահլիճում կայացաւ հանդիսաւոր երեկոյ, նուիրուած Կոմիտասի ստեղծագործութիւններին եւ նրա ծննդեան 60ամեակին (1):

Նոր կենցաղի երգեր.— Յայտնի երաժշտագէտ Ռոմանոս Մելիքեանը վերածշակման է ենթարկել 10 նոր կենցաղի երգեր, որոնց նիւթը վերցուած է պրոլետարողների գրուածքներից, իսկ երաժշտութիւնը՝ ժողովրդական է:

Արեւելեան նուագախումբ.— Արեւելեան նուագախումբն իր աշխատանքների մէջ մտցնում է նոր գործիքների վերախմբաւորում՝ օրկեստրի գունաւորումն աւելի ուժեղացնելու համար:

Երեւանի Պեսկոնսերվատորիայի երգեցիկ խումբը պատրաստում է յատուկ երաժշտական երեկոյ, նուիրուած Կոմիտասի ստեղծագործութիւններին:

Սպենդիարեանի «Ալմաստ» օփերան Օսեսայի բեմին վրայ.— Վերջերս Օսեսայի օփերայի թատրոնում ներկայացուեց Սպենդիարեանի «Ալմաստ» օփերան: Հայաստանի կաւալարութեան կողմից այդ հանդէսին մասնակցեցին նկարիչ Մ. Սարեանը եւ երաժշտագէտ Ռոմանոս Մելիքեանը:

Օփերայի գեղարուեստական ձեւակերպման զործը պատկանում է նկարիչ Մ. Սարեանին:

Լոյս տեսան Հ. Ս. Հ. Պետհրատի երաժշտական սեկտորի հրատարակութեամբ երիտասարդ երաժշտագէտ Վարդգէս Տալեանի «Կոմսոմոլ ետր» եւ «Նոր Գութան» ձեւերգները, դաշնամուրի նուագակցութեամբ: «Կոմսոմոլ ետր»ն արժանացել է Երեւանի Պետհրատի երաժշտական սէկտորի մրցանակին:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արուեստի Ֆրոնտում.— Երեւանում սկսել է

(1) Մնացեալը կը յապաւեննք, որով հետեւ արդէն մեր վերջին թիւին մէջ այդ երեկոյթին մանրամասնութիւնները հրատարակած էինք: Մ. Խ.

լոյս տեսել «Արուեստի Ֆրոնտում» խորագրով «Խորհրդային Հայաստան» օրաթերթի գրական - գեղարուեստական երկշաբաթաթերթ յաւելուածը:

Հայաստանի Պրոլետարոսների Աստղիացիան որոշել է ձօն ապագայում կազմակերպել զեկուցումներ, զխաղաղներ եւ գրական դասեր 1930 թուի ընթացքում լոյս տեսած գեղարուեստական գրքերի շուրջը:

Խնկո-Ապր գրական գործ. 35-ամեակը. — Հայաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիան որոշել է այս տարի տօնել Խնկո - Ապր գրական գործունէութեան 35ամեայ յարեւանը:

Նար Գոսի պատուի երեկոյ. — Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիան կազմակերպում է պատուի երեկոյ, նուիրուած յայտնի վիպագիր Նար Գոսին:

«Գրական Արեւ»ի թիւ 1ի շապիկը զարդարուած է Նար Գոսի ճեճաղիր նկարով, նրա գրական գործունէութեան 45ամեակի առթիւ:

Զեկուցումներ կլասիկների մասին. -- Մօտ ապագայում Հայաստանի խորհ. գրողների ֆեդերացիան կազմակերպում է զեկուցումներ Յակոբ Պարոնեանի, Խաչատուր Աբովեանի եւ Նորբա լոյս տեսած Արուստահայ Գրողների Անթուրգիայի մասին:

«Խալիչա» պատմուածքը. — Մ. Գարբինեանը կազմեց ու Հայտեակինոյին յանձնեց իր «Խալիչա» պատմուածքի սցենարին:

Վրաստանի Գրողների Ֆեդերացիան այս տարի որոշել է տօնել ականաւոր գրող Նար Գոսի գրական գործունէութեան 45ամեակը: Մօտ ապագայում կը հրատիրուի կազմակերպիչ յանձնաժողով:

«Գրական Արեւ». — Թիֆլիսում լոյս տեսաւ «Պրոլետար» օրաթերթի յաւելուած «Գրական Արեւ» գրական-գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթի թիւ 1ը, որի բովանդակութիւնն է. «Յունուարի 9ը» — Վարդգէսի, «Առանց երեք»ի — Էրինքերգի, «Գարնան արեւը» — Կորբուսի, «Ես եր-

գում եմ հնգածեակը» — Իօհաննէս Բեխերի, «Գեղակահարուած բուշեիկի յիշատակին» — Գուրգերեանի, «Բանաստեղծ Վահան Միրաքեան» — Արամ Երեմեանի, եւայլն:

«Հայկական գրականութեան սերիա. — Ռուս Պետհրատը «Հայկական Երկանութեան սերիա» ընդհանուր վերնագրի տակ հրատարակել է ռուսերէն՝ յայտնի գրող Ստեփան Զօրեանի զըրուածքների երկրորդ զիրքը, որի մէջ մտնում են՝ «Գանձը», «Երկաթուղային», «Մովանը», «Պատերազմը», «Զրհորի ձօն» եւ «Օհանի ձաճը» պատմուածքները: Նոյն սերիայով շուտով լոյս են տեսնելու Նար Գոսի «Մահը» վէպը եւ Մ. Գարբինեանի «Կիկոսը»:

Գրողների անկիւն. — Վրաստանի Գրողների Ֆեդերացիայի հայ պրոլետարացիացիայի հայկական սեկցիաները որոշել են կազմել «Գրողների անկիւն, ուր պիտի ժողովուին գրողների նիւթերը, նրանց ստեղծագործութիւնները, կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագրերը, եւայլն:

«Գրողների անկիւն»ի կազմակերպութեան գործը Վրաստանի Գրողների Ֆեդերացիայի հայ սեկցիան յանձնել է Արամ Երեմեանին: Առաջարկուած է գրողներին իրենց ստեղծագործութեանը վերաբերեալ բոլոր նիւթերը ձի շաբաթուան ընթացքում յանձնել Արամ Երեմեանին:

ԺԼ.ԲԳ դարու աւուդ. — Արամ Երեմեանը յայտնագործել է ձի աշուդ, Դուլ Յովհաննէս, որ ապրել է եւ գործել ԺԼ. դարի երկրորդ կիսին Հարուսային Պարսկաստանում: Գրքովը տպագրուել է Վենետիկում, Ս. Ղազար:

Նոյն հեղինակը ի լոյս ընծայեց այս օրերս ձի գրքով՝ Աշուդ Գրիգոր Տալեանի աշուղական գործունէութեան նուիրուած:

Թիֆլիս ԹՂԹԼԿԻՑ